



Եներգետիկ անվտանգությունը և Եներգաարդյունավետությունը Հայաստանի տնտեսական զարգացման բանալին են: «EU4Energy» («ԵՄ-ն Եներգետիկայի համար») նախաձեռնության շրջանակում Եվրոպական միությունն աջակցում է մատչելի, անվտանգ և կայուն Եներգիային՝ առավել հուսալի Եներգամատակարարման, Եներգաարդյունավետության խթանման և Եներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման միջոցով: Սա քաղաքացիների, տնային տնտեսությունների և բիզնեսների համար ապահովում է ավելի հուսալի Եներգամատակարարում, ինչպես նաև նվազեցնում է Եներգասպառման ծավալներն ու ածխաթթու գազի (CO₂) արտանետումները:

Այդ նպատակով ԵՄ-ն աջակցում է այն նախագծերին, որոնք՝

- օգնում են Եներգետիկ շուկաների բարեփոխմանը
- խթանում են վերականգնվող Եներգետիկան
- նվազեցնում են Եներգասպառումը
- աջակցում են Եներգետիկ արդյունավետությանը


ԵՄ Կայուն Եներգիայի շաբաթ 2020 (#EUSEW2020)

EUSEW-ի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովը կազմակերպում է Կայուն Եներգիային նվիրված ամենամյա մրցույթ՝ արժանին մատուցելով Եներգաարդյունավետության և վերականգնվող Եներգետիկայի ոլորտներում բացառիկ նորարարություններին: Եվ արդեն երկրորդ տարին անընդմեջ մրցույթը կներառի հատուկ **անվանակարգ**՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանի համար:


Քաղաքացիների դաշնագիր

Քաղաքացիների դաշնագիրը տեղական կլիմայական և Եներգետիկ գործողություններին ուղղված աշխարհի խոշորագույն շարժումն է, որը միավորում է ԵՄ կլիմայական և Եներգետիկ նպատակների իրականացումը կամավոր կերպով հանձն առած հազարավոր տեղական իշխանությունների: Դաշնագրին միացած քաղաքները պարտավորվել են **2030 թվականի դրությամբ մինչև 40%-ով** կրճատել ջերմոցային գազերի արտանետումները և ընդունել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման ու հարմարման համատեղ մոտեցում: 2020 թվականի մարտ ամսվա դրությամբ տվյալ նախաձեռնությանը **Հայաստանից միացել են 26 քաղաքներ**, որոնք **ընդգրկում են երկրի բնակչության գրեթե 58%-ը**:

Հայաստանի Եներգատար ճյուղերը*



Եներգիայի արտադրությունը Հայաստանում 2017 թվականին*



Արևային Եներգիայի ներուժի օգտագործում

«Արևային էլեկտրակայանի կառուցումը շատ լավ բան է մեզ համար: Այն Էկոլոգիապես մաքուր է, և դա շատ կարևոր է»,-

Արսեն Համբարձումյան,
Գլխավոր համայնքի բնակիչ, Հայաստան



ԵՄ կողմից ֆինանսավորվող «Արևածո» ծրագիրն աջակցել է 4000 արևային պանելներով էլեկտրակայանի կառուցմանը, որն ապահովում է բավականաչափ էլեկտրաէներգիա 500 տնային տնտեսությունների Եներգամատակարարման համար: